



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



92

ՀԻՇԱՏԱԿԱՐԱԿՏՈՐ  
1911

Էպ. Բ  
Մր. 20, 22

ԿՐԻ, ԻԲ

Կ. Պուլիս

*[Faint handwritten notes and a small sketch of a figure]*

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ~~

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ~~

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԹՅԱՆ~~

*[Faint handwritten notes]*

*[Handwritten signature]*

9147.9257q

Գ-36



32

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
1-2

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՁԵՆԱԳՐԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՆ. ԵՒՆ.

## 1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՀԱՌԻՓՈՂ



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Կ Ա Ջ Մ Ե Ց  
Վ. Գ. ՋԱՐԳԱՐԵԱՆ

ԱՋՍ ՄՍՏԵՆԱՇՈՐ ԹԻԻ 20

- 90. Ազու Կարապետ Գալուստեան 1 Պատկեր
- 91. Դեան Կարսեան 1 »
- 92. Մխչյան Մխչյան 1 »
- 93. Տօֆ. Եփրատ Կոմիտեան 1 »
- 94. Եսայր Մասրեան 1 »
- 95. Գարեգին Պետրոսեան 2 »
- 96. Կրկուր Ջրեան Տիգրան 1 »



ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ  
Պ Բ Ա Կ Ի (20)

ՄԻՔԱՆԵԼ ՄԻՔԱՆԱՐԵԱՆՑ

1911  
Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
Պատր. Այլ. Սեփեթյանի փողոց թիւ 27

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
Վ. Ե. Պ. ՋԱՐԳԱՐԵԱՆ ԵՂԱՐՐ  
Կ. ՊՈԼԻՍ

32  
9-36



17 197


9147.92519

Q-36

Tar

նարարականով զրկեց զինքը Եգիպտոս որուն կու- սակալն էր այդ Թուականին Խուրչիա փաշա : Եռուսֆ պէյ Խուրչիա փաշայի և սնոր յա- ջորդ Մէհմետ Ալի փաշայի ասան թարգմանի

ասարիմ խորհրդականը , այլ և օգտուեցաւ անոր խորհուրդներէն որոնք ի վերջոյ Եգիպտոսի բարե- նորոգութեան նպաստեցին , զինքը անուանեց Պէյ , ասկէ զատ ալ վաճառականութեան և ար-



1005  
22634

233—ՄԱՀԱՐՁԱՆ ՊՕՂՈՍ ՊԷՅ ԵՈՒՍՈՒՖԵԱՆԻ

պաշտօնէն զատ վարած է նաեւ առաջին խոր- հրդականի , առաջին գործակալի և հազարա- վետի պաշտօնները մինչեւ 1833 : Մէհմետ Ալի փաշա որ հաշակաւոր եղած է խելացիութեամբ չմոռցաւ ոչ միայն իր հաւա- Յիւսակարան

տաքին գործերու նախարար անուանեց : Եւրոպացիք ամէնքն ալ գովեցին Մէհմետ Ալի փաշան՝ ըրած ճարտար ընարութեանը համար վանդի իրենք քաջ կ'զգային թէ Ե- գիպտոսի յառաջդիմութիւնը մէկ մը վաճառա-

11-1648աւ  
200  
604-73

1005  
22634



կանութեան բարգաւաճումէն և մէկ մըն ալ Արտաքին գործոց յարաբերութիւններէն կախում ունէր և որոնց մէջ մեծ ճարտարութիւն ցոյց կու տար Պօղոս Պէյ Եռասուֆ :

Այն հաշտութիւնը որ 1836ին ըստ Սուլթանի Մէհմէտ Ալի փաշայի հետ, այնպէս վարպետութեամբ և յաջողութեամբ լմնցուց Պօղոս Պէյ որ Յրանաական լրագիրները յայտնի կերպով յայտարարեցին թէ Եւրոպայի դիւանագէտներէն և ոչ մին կրնար այդպիսի դժուար խնդիր մը այնչափ շուտով և յաջողութեամբ լուծել ու լմնցնել՝ ինչպէս որ լմնցուց ըսին «սա խորագիտ է և մեծամեծն էր Հայր» :

Իր խաղաղասէր և նրբամիտ քաղաքագիտութեան իր ապացոյց Օսմանեան Պետութեան և Եգիպտոսի պատերազմին համաձայն չէր. Մէհմէտ Ալի փաշա տեսնելով որ Պօղոս Պէյի գոչակութիւնը ճշմարիտ էր և Եւրոպական երեք մեծ պետութիւնները միարանս ևն, Պօղոս պլի յանձնեց հաշտութեան խնդիրն որ կատարեալ ձեռնհասութեամբ յաջողուց և թէեւ իրեն առաջարկուեցաւ ալ որ Պօլիս դայ և ծառայէ Սուլթան Մանուէլ արքային բայց ինք մերժեց լաւագոյն սեպելով միայն փոխարքային ծառայել որուն անթիւ բարեքները տեսած էր :

40 տարիներու երկար շրջանի մը մէջ որ ծառայեց Եգիպտոսի կուսակալին երեք արտաքին շնորհակց իր գործերուն վրայ :

Եւրոպական օտար մամուլը միշտ նպաստա-

ւոր խօսած է Պօղոս Պլի վրայ և երբ 1841 ին Լորտ Քալմիքսթոն Անգլիոյ Արտաքին գործոց նախարարը՝ դաշնակից տէրութիւններուն վճիռը զրկեց իրենց ծովակալին՝ Լորտ Սթրաթֆօրտէնի, մասնաւորապէս յանձնարարեց որ վճիռը երբ յանձնուի Մէհմէտ Ալի փաշային Պօղոս Պէյն ալ ներկայ գտնուի :

Հայր էր որբերու և աղքատներու, խոնարհամիտ, հեզ էր և ողորմած :

Շինած է Ալեքսանտրիոյ եկեղեցին և պաշտօնեաներուն եկամուտ կապած, մեծամեծ օգնութիւններ և ազատութիւններ առած է լատին վանքերուն համար :

1844 յունվար 10ին մեռաւ և թաղուեց պէտք եղած պատիւներով եղած չըլլալուն համար Մէհմէտ Ալի փաշա հրաման զրկեց որ նորէն հանդէս ընեն և այս անգամ զինուորական պատիւներով և նուագախումբով կատարուեցաւ յուզարկաւորութիւնը, նաև փաշան հրամայեց որ Ալեքսանդրիոյ եկեղեցւոյն ծախսը իր քսակէն հոգացուի և Պօղոս Պէյն սեզ ալ Յարութիւն Պէյը դրաւ (յետոյ Արթին Եագուպ փաշա) : Պօղոս պէյ երեսուն աղքատ անւորներու ապրուստը ապահոված էր և Վենետիկի Միսթարեանց վանքին նուիրած է Եգիպտական մամիայ մը :

Հրատարակել սուլթան Եգիպտոսի Հայերէնը 1826ին Վենետիկի մէջ, թարգմանութեամբ Հ. Մանուէլ Վ. Ջախճախեանի :

ԱՂԻԻՐՆԵՐ. — Բազմավէպ 1846 թիւ 6. —



# ԱՂԱ ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՈՒՍԵԱՆ

Վ Ա Ն Ե Ց Ի

1790 — 1864

Կարապետ Գալուստեան ծնած է Վանայ մէջ 1802ին (ըստ տապանագրին) բայց իր ազգականներու վկայութեամբ 1790ին, իր ընտանեկան անունն էր Հանրմեան կամ Հանրմօղլու :

Հայրը քահանայ էր Վանայ մէջ Տ. Գալուստ և իր զաւակներն ալ խաչատուր և Կարապետ տեղւոյն վարժարանը կը յաճախէին :

Պաշտուր պանդխտութեան կ'ելնէ և կը հասնի Գանիթ ուր քիչ ետք կուգայ նաև իր եղբայրը Կարապետ ուր արաբերէնը բաւական սովորելով Եգիպտոսիներու քով կը մշտնէ, ասոնք կառավարութեան հետ կարեւոր գործեր կ'ընէին. Կարապետ հետզհետէ յառաջանալով իր կիներն ալ Վանէն բերել կուտայ որ չը կարողանալով սովորել հայրենաբարձութեան

1833 ապրիլ 1ին կը մեռնի, անկէ առաջ մեռած էր նաև իր եղբայրը Պաշտուր Գալուստեան որուն զերեզմանը Մարմենայի մէջ է :

Ինք սեզանաւորական գործերու հմուտ և ճշգրտագէ էր, Արաբը մեծ վաստակութիւն ունէր իր վրայ :

1840ին Իպրահիմ փաշայի ժամանակ, Մէհմէտ Ալի փաշայի թուր Ապպաս Հիլմի պէյ Անգլիական հիւպատոսարանը կ'երթայ և այցել-



234—ԱՂԱ ԿԱՐԱՊԵՏ ԳԱԼՈՒՍԵԱՆ

լութիւն մը կուտայ, Իպրահիմ փաշա որ յազմական էր և փայլուն վիճակի մը աէր, իմանալով և կասկածելով որ իր եղբայրը Ապպաս Հիլմի պէյ օտարականներու կը դիմէ անոնցմէ պաշտպանութիւն գտնելու համար, կը հրամայէ որ երեք օրէն երկրէն դուրս ելլէ, և անոր գրամական օգնութիւն ընողն ալ կախազան բարձրանայ, Իրերը այս վիճակին մէջ էին երբ Հիլմի պէյն հաւատարիմ ծառան ծերուկ Արաբ մը կը դիմէ Ազնաւորեանին (մալիցէ նաւերը) որ մեծ բարեքներ տեսած էր Մէհմէտ Ալի փաշայէն :

Ազնաւոր կը մերժէ օգնել պէյին անշուշտ վախնալով կախազանէն :

Ապպաս պէյ ճարահատ և մասովոր, ծերուկը կը թելադրէ Գալուստեանին դիմել :

— Հայէն ի՞նչ կ'ելլէ, Ազնաւորեանը բան մը չը կրցաւ ընել, ան կարող է :

Ծերուկը կը դիմէ Գալուստեանին, կը պատահէ ամէն ինչ, Գալուստեան իր ապագան հոն կը տեսնէ :

— Արշալոյսին պէյը թող ինձի գայ : Առատն կանուխ պէյը կուգայ և կը տեսնուի Գալուստեանին հետ :

— Հիւպատոսարան երթալուս համար ստիպուած եմ մեկնիլ, ինձի դրամական օգնութիւն կրնան ընել, որովհետեւ Իպրահիմ փաշա չուզեր որ նիւթական վիճակ ունենամ :

— Ո՞ր պիտի աքսորուիք, աէր իմ :

— Լիւքսոր (փարաւոններու հին մայրաքաղաքը, 14 ժամ երկաթուղով) :

— Փաշա, քանի որ պիտի երթաս ես դրամը հոն կը հասցնեմ, բայց պայմանով մը, մեր երեքին մէջ մնաց գաղանիքը, դուն գնա Լիւքսոր ես դրամը կը հասցնեմ :

Պէյը կը մեկնի Լիւքսոր — Բօրթ Սայիտի ճամբով :

Կարապետ Գալուստեան Սիւրանի վաճառականի մը լուր կը զրկէ որ Հեմինեկի մը աւանդով իրեն գայ :

Գալուստեան իր աննելիքներէն 5500 ոսկի ժողովելով 1000 ական ոսկինոց ապրակներ կը չինէ և կը կնքէ, և 500 ոսկին ալ այդ մարդուն տալով կ'ըսէ. «Բեկի պաշան մը պիտի տամ, պէյը Լիւքսոր աքսորուած է և դուն այս դրամները իրեն պիտի յանձնես, ստացագիրը պիտի աւանես և ինձի բերես, մարդ չը պիտի իմանայ :

— Քանի որ սիրոջս բարեք կ'ընես պիտի կատարեմ փափաքդ և դրամական հատուցում ալ չեմ ուզեր : Սուրբանին տասը օրէն կը հասնի հոն և յանձնելով դրամը կ'ըստանայ ստացագիրը :

Ապպաս շատ կը զգացուի թէ ամէնէն լքուած, Հայ մըն էր միայն որ իրեն օգնութեան հասաւ :

Ոչ ոք կ'իմանայ և երկու տարի կ'անցնի որ աստեւ Իպրահիմ փաշա Փարիզ կ'երթայ, վերադարձին կը մեռնի, Սուլթան Մէհմէտի ֆէրմանը կուգայ որով Ապպաս փաշա խախտ կ'անուանուի : Լիւքսոր հրաման կ'երթայ և ամէն կողմէ շնորհաւորութիւններ կը տեղան. Ապպաս փաշա իր խախտ 35000 զօրքով կուգայ Գա-



հիրէի Միջնարեղբը, ուր ամբողջ աւազանին շնորհաւորութեան կուզան:

Գալուստեան երկար վարանումներ կ'ուսննայ թէ նոյն օր երթայ թէ յաջորդ օրը, վերջապէս կ'երթայ կր ներկայանայ թէչրիֆաթէիին որ կը մերժէ քանի որ կ'ըսէ Ձեր անունը տետրակին մէջ չէ նշանակուած:

— Ըսէք փաշային թէ Կարապետ անունով վաճառական մը եկած է:

— Ձեռք համարձակիր որովհետեւ ժամանակը անձուկ է:

Գալուստեան կամայ կամաց բերդէն կ'իջնէ՝ այդ միջոցին Ապագա փաշա զուրս ելլելով կը հարցնէ թէ վաճառական մը եկած է արդեօք:

— Այո՛ հիմա մէկը եկաւ բայց որովհետեւ ցանկին մէջ նշանակուած չէր, չընդունեցինք:

— Շուտ կ'անջնէք զինքս կ'ըսէ և ինքը քարի մը կրթնած կը կենայ ու կը սպասէ որ Գալուստեան գայ:

Ամէնքն ալ կը գործանան և կը կանչեն Գալուստեանը, փաշան կը զիմաստէ զինքը և թեւը կը մանկ այդ շալվար հագած և փաթթուցաւոր մարդուն:

— Քեզի յանձնեցի կ'ըսէ երկրին ցորենի, աղի և ծխախոտի հօգածութիւնը, բոլորք քու վարչութեանդ սակ լլլան և կը հրամայէ ֆէրմանը սալ իբր անօրէն ընդհանուր մաքսերու: Գալուստեան ի ընէ ու չիմ և հաշուազէտ անձ ամէն գործ կ'անմաւորարար կը կատարէ, և այս պատճառաւ շատ կը հարբատանայ, Նեղոսի վրայ միայն իր հաշուին 1000 նաւ կ'ունենայ, միջոց մը Սուսան կ'երթայ և սուրքերը հաւաքելով սնուկներով կը բերէ Եգիպտոս:

Անգամ մը Չակագիկի մէջ սով կը պատահի, փաշան կը հրամայէ Գալուստեանի որպէս զի առաջըր առնէ, Կարապետ իր գրածով ամբարները կը լեցնէ և յետոյ վիստով 12 զրուշէն կը ծախէ փոխան 25 զրուշի, միւս վաճառականներն ալ վախնալով որ պիտի վիստեն անոնք ալ կ'ըսկան նոյն գնով ծախել և ահա սովը կը վերջանայ:

Կառավարութեան վարձած է Տամիյէթի ձկնարանը:

Իր ազդեցութիւնը մեծ էր և զրոյցի մը նայելով Սուհամմէտ Ալի և Իպրահիմ փաշաներու իշխանութեան ատեն իր շոգենաւակին մէջ թնդանօթ կրելու արածութիւնն ունէր:

Անտանման վարկ ունէր ելեւմտից պաշտօնէութեանէն, վարած է փողերամոցի տեսչութիւնը Ապագա փաշայի իշխանութեան բովանդակ շրջանին (1848—54) թէև քիչ էր մնացեր որ պատճառաւ մը աքսորուէր թիւրիւմացութեամբ մը, սակայն փոխարքային բժշկապետին միջամտութեամբ կ'ազատի:

Ունէր առաջնակարգ աղամանդալարդ պատուանշան: Ինք քանի կը բարձրանար այնքան ազգին կը մօտենար, առաջնորդ Գարրիէլ Սրբազանի հետ կը անօրինէր ազգ. խնդիրները և կը վարէր ազգ. հաստատութիւնները: 1854 Յունվար 1ին կ'անմաղկըր մը պատրաստուած է վարժարանի, եկեղեցական, գերեզմանական և ժառանգական ուրիշ գործերու համար, որու սակ Գալուստեան ստորադրած է Գարրիէլ Եպի հետ:

Տարակէ կեննտաի մէջ երուստողէմի վանքին սեփական տուն մը կար որ հրդեհէ մը աւերակ դարձած էր: Գալուստեան 20000 ֆրանք տալով այդ տեղին վրայ կը շինէ վարժարան մը և կը կոչէ Մովսէս Մարտիկոսի անուամբ, 1854 սեպտ. 15ին չքեզ հանդէսով վարժարանը կը բացուի և հին գաղտանն աշակերտները կը փոխադրուին հին: (1897ին Գալուստեան ժողովոյ որոշմամբ Սարգիսեան անունը կը փոխուի Գալուստեանի): Կարապետ Գալուստեան չէնքը շինելէն ետք կը խորհի անոր բարոյական չէնքն ալ կ'առուցանել քանի որ այն ատեն եկամուտը հարկը 1200 ֆրանք էր և անհարին էր մասակարարել այդ գրամով, սակայն իշխանավայել ստատութեամբ կ'ուսկ կ'ընէ և իր շինած վարժարանին կարեւոր կալուածներ կը նստիւրէ, որոնք այսօր քանի մը պատիկ աւելի արժէք ունին:

Անաւասիկ զպրոցին արձանագրութիւնը, «Շնորհիւն Ասուծոյ ի հիմանց կառուցաւ վարժարանս յանուն Քերթողահօրն մերոյ Մովսիսի խորեհացոյ արդեամբ եւ ծախիւք վանեցի ազգասէր Կարապետ աղայի Տէր Գալուստեանի յաւերժական յիւստակ լուսահողի հօրն Տէր Գալուստի և մօրն Մարտիայ եւ եղբօրն Խաչատուրոյ եւ կենդանեաց ի վայելումն եւ ի բարեկարգութիւն մանկանց Արամեան տոհմիս յեզրիս ի բարոյական եւ ուսումնական վարժութեան: Յամի Տեառն 1854 Սեպտ. 15

Կաակն ինքնագիր է և թուրքերէն լեզու շարագրուած է, կը կրէ 1274 շապան թուականը (1858 մարտ 5) վկան է Մաշեք պի Միքայէլեան և հաստատող Գարրիէլ Եպ:

Մեծանուն բարերարը իր այս կտակագրով արամազրած է իր ամբողջ ստացուածքն ի նպաստ Ազգ. հաստատութեանց և անձերու, աղքատը, դպրոցը, եկեղեցին, ժառանգորդները, ծառաները և պաշտօնեաները: 430000 ֆրանքէն աւելի արժէք մը ունեցող շարժուն և անշարժ այդ կալուածները հիմա 800000 ֆրանքէն աւելի կ'արժեն:

Իր կտակը կառավարութեան վաւերացուած է 1887ին շնորհիւ Իգմիրեան երջանկայիշատակ հայրապետին որ այն ատեն Եգիպտոսի առաջնորդն էր:

1864ին Գալուստեան նամակ կը գրէ Պրիմեան Հայրիկի «թէ ել եկուր, վարագրե՛ք Վիեննա և Ազգայնագր. ալ վենետիկ պիտի ընեն», Հայրիկ ճամբայ կ'ելլէ սակայն սակաւին Եգիպտոս չը հասած Գալուստեան կը մեռնի, իր

կտակին մէջ Հայրիկի մասին ոչինչ գրուած է: 1864 ապրիլին Պոլսոյ Պատրիարքարանէն Սահմանադրութեան հաստատման համար պաշտօնագիր եկած ըլլալով, Գալուստեան Հէլլիսի ազարակէն կ'իջնէ ժամանակեղբու համար խորհրդածութեանց և երբ Գահիրէ կը հասնի 1864 ապրիլ 8ին յանկարծամահ կ'ըլլայ:

Ահաւասիկ իր դամբարանին արձանագրութիւնը որ կը գտնուի Մարմինայի մէջ:

«Դամբարան Ազն. Կարապետ Աղայի Տէր Գալուստեան վանեցոյ պայծառափայլ իշխանի և բարերարի որ հանգեաւ ի աէր ամաց 62 յամի փրկչին 1864 ապրիլի 8 թողեալ ի սուգ անմիտիմար զսիրելի զազգ իւր համայն:»

Աղբիւրներ. — Նոր օր 1900 թիւ 34, 35, 36. (Ն. Աղապարմ) և Աւեսիս Թնկրեանէ. — Արձանագրութիւն գերեզմանատանց:



# ՆՇԱՆ ՆՈՐԻԿԵԱՆ

1801 -- 1866

Նշան Նորիկեան ծնած է Ազնայ մէջ 1801 թուականին, իր հայրը Ազնայ մեծատուններէն սեղանաւոր մահաւոր հաճի Նորուկ աղա, կրցեր էր անցեալ դարուն սկիզբը վարժապետներ գրանել Նշանին կարգալ, գրել, հաշուել, և թրքերէն սովորեցնելու համար:

Երիտասարդ հասակին Պոլիս եկած է և անկէ ճամբորդած է Դամասկոս, Բիրիս, Պէյրութ, Էրզրում, Արշլպեղազոսի կողմները, Իզմիտ և Եգիպտոս և այդ առիթով Նշան աղա շատ բան տեսեր, շատ բան լսեր էր, ուսումնասիրած էր մարդիկը, և անոնց բարքերը, և փոխանակազրի առևտուրէ սկսելով մինչև սեղանաւորութեան տանելու աստիճան զարգացուցեր էր իր նիւթական վիճակը, միւս կողմէ իր ստորեայ յարարութիւնները, և ճամբորդութիւնները կրթեր

էին իր ճաշակը և մտաւորապէս զինքը զարգացուցեր էին:

Իբրեւ առաջնակարգ սարաֆ Պոլիս հաստատուելէ ետքն ալ զբաղած էր ստանորդներու (Աշար) յանձնառութիւններով (իլթիլա) որ տեսնօք սարաֆներուն գլխաւոր զբաղմունքն էր:

Հոգեկան բարեմասնութիւններով օժտուած յաջողութեան մէջ խնայող և բարեկամին հաւատարիմ, մեծին ու փոքրին յարգամատոյց, նախապաշարութեանը զերծ և իր զօրը կանխած մարդ մըն էր Նշան աղա, ինչպէս կը վկայեն ժամանակակից ձերեր:

Իրեն այցելող բարեկամներու կեանքովը կը հետաքրքրուէր և անդադարաւ կուզէր հասկընալ իր բարեկամին վիճակը, երբ հասկնար թէ անիկայ նիւթական նեղութեան մէջ կը գտնուէր

էին իր ճաշակը և մտաւորապէս զինքը զարգացուցեր էին:

Իբրեւ առաջնակարգ սարաֆ Պոլիս հաստատուելէ ետքն ալ զբաղած էր ստանորդներու (Աշար) յանձնառութիւններով (իլթիլա) որ տեսնօք սարաֆներուն գլխաւոր զբաղմունքն էր:

Հոգեկան բարեմասնութիւններով օժտուած յաջողութեան մէջ խնայող և բարեկամին հաւատարիմ, մեծին ու փոքրին յարգամատոյց, նախապաշարութեանը զերծ և իր զօրը կանխած մարդ մըն էր Նշան աղա, ինչպէս կը վկայեն ժամանակակից ձերեր:

Իրեն այցելող բարեկամներու կեանքովը կը հետաքրքրուէր և անդադարաւ կուզէր հասկընալ իր բարեկամին վիճակը, երբ հասկնար թէ անիկայ նիւթական նեղութեան մէջ կը գտնուէր

էին իր ճաշակը և մտաւորապէս զինքը զարգացուցեր էին:



անմիջապէս անոր ապրուստի գործ մը կը գըտնէր, յանձնարարելով իր ու եւ մէկ բարեկամին :

Աղքատասէր ու բարեխիտ շատ աղքատներու արցունքը սրած էր . և երբ ընդհանրապէս սեղանաւորներէ շատեր իրենց պարտապահանջները նեղած են , ինք միշտ ներող եղած է և մանաւանդ երբ ան հայրենակից էր փոխանակ թողւու խանին մէկ անկիւնը իր սուրը հիւրընկալած է , ամիսներով ու տարիներով կատարեալ քրիստոնեայի մը անշահախնդրութեամբ :

Բաժին մը , օգուտ մը հանել ուրիշին համար , ազգին համար՝ իր ժամանակէն իր ազգե-



235—ՆՇԱՆ ՆՈՐԻԿԵԱՆ

ցութենէն և գործունէութենէն այս էր եղած իր հաճոյքը , բարիքը կընէր բարիքին համար և չկար մէկը որ ամենափոքր վնաս մը կամ զրկանք մը տեսած ըլլար իրմէն :

Յուցամոլութենէ կը խորշեր և մոլեռանդ չըլլալով անխորական էր , իբր ժամանակին ձկնթըմէն կանուխէն առած էր sportի ճաշակը և որքան անվրէպ նշանաւոր , նոյնքան ալ կարծիճ ձիավարժ մը եղած էր :

Իշխան — աղայութեան փափաքներ երբէք չէր ունեցած , ժողովներու հողաբարձութիւններու , խնամակալութիւններու միշտ անդամակցած է և չէ մերժած ու եւ ազգային պաշտօն այն համոզմամբ թէ անհատը պէտք է ծառայէ ազգին : Ազգային դատարարակութեան գործին շատ

համակիր և ուսումնասէր ըլլալուն՝ իր ընտանեկան թաղերուն մէջ կրթական խնամակալութեան գլուխ կը դնէին զինքը . այսպէս ըրած էին Սարրաֆ Ճանիկ և Մաքսուտ ամիրաները երբ Նշան աղա Սասազիւղէն Օրթագիւղ փոխադրած էր իր բնակութիւնը :

Չէր կրցեր մերժել անոնց առաջարկը և իրբն Փոխանորդ Մաքսուտ ամիրայի՝ կը նախագահէր խնամակալութեան մը որու անդամ էին նշանակուած նաև Ճանրմեան Յովհաննէս , Պապեան Յովսէփ , Սինանեան Գրիգոր , Նուբեան Գաբրիէլ , Եուսուֆեան Տիգրանիկ և այլք :

Սաղմոս , գործոց նարեկ , քիչ մ'ալ Փէշափմալճեան քերականութիւն դաս կը տրուէր անկէ յառաջ Օրթագիւղի թարգմանչաց վարժարանին մէջ : Նոր խնամակալութիւնը նոր ծրագրերի մը համաձայն կանոնաւոր դասընթացք մը ապահովեց , նոր ուսուցիչներ բերուեցան , որոնցմէ մին Միրզա Վանանդեցի յատկապէս Իվարէն կանչուեցաւ իրբն անօրէն և ուսուցիչ :

Օրթագիւղի թարգմանչաց վարժարանի այդ շրջանը (1857—59) փայլուն եղած է բաղդատմամբ անցեալին և արդիւնքը շատ գոհացուցիչ եղած է թաղին մանկաւոռոյն համար , բայց հողաբարձութեան ջանքը թաղեցիք ջլատեցին . դըժգոհ էին , որով թաղեցիներու պատգամաւորութիւն մը կը ներկայանայ խորհրդարան և ձեռք պատժոյն դպրոցին մէջ վերահաստատութիւնը կը պահանջէ :

Որովհետեւ Նորիկեան ժողոված էր վարժարանին սրահին թաթերը , չպուխները և ֆալախանը , այդ տանջանքի տեղի գործընթացը ու տարած նետած էր վառած կրակարանին մէջ :

— «Մեծ կուզենք ըսեր էին այդ կրթասէր պատգամաւորները , չենք ուզեր որ ձեռք վերցուի մեր դպրոցէն :»

Մեծը վարժարանէն աքսորել , նորութիւն մ'էր Օրթագիւղի համար , բոթոքաքանկ գործ , ինչպէս կը յաւակնէր որակել զայն նոյն ատենի եկեղեցւոյն Աւագերէցը Տէր Գալուստ քահանան , ակնարկելով Նշան աղային որ Սասազիւղէն Օրթագիւղ փոխադրուելէն ետքն ալ չէր բաժնուած իր բարեկամ Տաներէցէն Տ. Գէորգ Արծրունի քահանայէն որ այն ատենները բրթթէսթան մըն էր նկատուած մօլեռանդ դասակարգէն , անոր համար որ իր ծուխերուն կը յանձնարարէր աշխարհաբաս Աւետարան կարդալ :

Նշան աղա և իր ընկերները ստիպուեցան քաշուիլ վարժարանի խնամակալութենէն և վարժարանը ինկաւ իր փայլուն վիճակէն :

Նշան Նորիկեան Ատենապետ ընտրուեցաւ Ազգ. Տնտեսական խորհուրդին 1863ին , այդ ատիւ էր որ հիւանդանոցի պարբերական նորագութեանց վերջ դնելու համար ընդարձակ նորագութի գծուարին գործին ձեռնարկեց և կրցցաւ գլուխ հանել յաջողութեամբ :

Մինչեւ այն ատեն Պէգճեան ամիրայի շինած հիւանդանոցը չէր տեսած նորագութիւն մը և փլչելու վտանգին ենթարկուած էր : Այդ մեծ նորագութիւնը ազգային ամէնէն մեծ և կարեւոր արդիւնաւորութիւնն է եղած 1863—64 թուականներուն :

Այս մասին նոյն ատենուան հողաբարձութեան պաշտօնական տեղեկագրէն կը քաղենք :

«Ամէն տարի հիւանդանոցի շէնքին նորագութեան համար մեծ գումարներ ծախք կըլլար և դարձեալ միևնոյն հին ու աճ և չէնքն էր : Հիմնական նորագութեան մը հարկը զգալի եղաւ : Այս անհրաժեշտ պէտքը Տնտեսական խորհրդոյ ատենապետ մեծապատիւ Նորիկեան էֆէնտին զգալով՝ Հողաբարձութեան առաջարկութեան վրայ և վարչութեան գիտութեամբ ազգատիրաբար յանձնառու եղաւ այս նորագութեան հոգն իր վրայ առնել և գլուխ հանել՝ ազգասէր և առատաձեւն անձանց կամաւոր նուէրներուն ապաւինելով :

Ուրախութեամբ կը լսենք թէ Մեծ . Նորիկեան Նշան էֆէնտին յաջողեցաւ այս ծանր ու դժուարին գործը գլուխ հանել և Ազգին ձեռքը յանձնել գրիթէ նոր կառուցուած հաստատուն շէնք մը , ըստ որում այսօր հիւանդանոցը բոլորովին կերպարանափոխ եղած է ներսով ու դրսով նորագուած ու ներկուած , պատուհաններն ամբողջապէս նորէն շինուած . շէնքին բաժանումներն ու սանդուխներն աւելի կանոնաւորուած , բակերն և պարտէզները երկաթէ վանդակներով շրջապատեալ՝ մաքուր ու զարդարուն , մէկ խօսքով տխուր ու քայքայեալ շէնքի մը տեղ ուր ամէն կողմէն ձիւնն ու անձրեւը ներս կը տեղար հաստատուն վայելուչ և զուարթատեսիլ շէնք մը յաջորդած է , աւելի համաձայն ողջապահիկ կանոնաց , ուստի հողաբարձութիւն անհրաժեշտ պարտք կը համարի հրապարակաւ յայտնել իր խորին շնորհակալութիւնը ինչպէս Նորիկեան Նշան էֆէնտին , որ գլուխ տարաւ , նոյնպէս և այն ամէն ազգասէր անձանց որոնց ձեռնաուղութեամբ այս բարեգործութիւնը գլուխ ելաւ :» (Էջ 11—12)

Ասիկա մեծ յաջողութիւն մ'էր որու մէջ բաժին

ունեցաւ Նորիկեան , գուցէ ինք չը կարենար բուրժուաշնութեամբ յաջողիլ այսպիսի ձեռնարկի մը կիթէ Երամեան Գէորգ Պէյի անուգական սիկնոջ Էպրու հանրմին վեհանձն առատաձեւութիւնը չըլլար , Տիկին Երամեան իբր խնամակալուհի ազգին որբերուն՝ մեծ գումարներ նուիրելէ զատ յօգուտ հիւանդանոցի հարկը հազար դահեկանի մօտ գումար մ'ալ դրաւ Նշան աղայի տրամադրութեան տակ՝ այն օրէն որ այս վերջինը ձեռք առաւ նորագութեան գործը , այսպէսով օրինակ մը տուաւ տիկինը իր բարեգործութեամբ և ներշնչեց ուրիշներու ալ որոնք փութացին իրենց լուծան ապ սոյն բարենպասակ գործին :

Սոր ձերութեան չը հասած 65 տարեկան հասակին 1866 յուլիս 20 ին մեռաւ և իր յուզարկաւորութիւնը Սասազիւղ կատարուեցաւ ուր Ներսէս Վարժապետեան և Նար Պէյ սրբազանները իրենց ամէնէն պերճախօս դամբանականները խօսեցան :

Ժամանակին ազգային թերթերը մեծ գովեստով խօսած են իր վրայ ասոնցմէ Մասիս ծանուցանելով Նշան աղայի մահը կը յաւելու «հանգուցեալ Նշան աղան բարեբարոյ և բարեգործ անձ մը ըլլալով զինքը ճանչցողներուն ամենուն ալ սէրն ու համարումը կը վայելէր : 1863 ին ազգային անտեսական խորհուրդին անդամ և ատենապետ ընտրուելով հիւանդանոցի կիսաւեր շէնքերը նորոգելու կարևոր և դժուարին գործը իր վրայ առաւ և բարեւէր ազգայնոց ձեռնարկութեանը դիմելով՝ գրեթէ ի հիմանց նորոգեց յիշեալ ազգային հաստատութիւնը առանց ծանրութիւն մը տալու Ազգային Կեդրոնական թափուր անտուկին և առանց պարտք մը թողու որով մեծ և շնորհակալեաց արժանի ծառայութիւն մը մատոյց ազգին :

«Այս գործը միայն բաւական էր իր յիշատակը օրհնութեամբ յաւերժացնելու :» (Մասիս թիւ 754) Փնջիկ իր երրորդ թւոյն մէջ կը գրէ «Նշան աղայի մահը չէ թէ իր բոլոր ազգականաց այլ ընդհանուր ազգիս համար ցաւալի է :

«Անիկայ ազգին համար բաւական աշխատած է , ազգային պաշտօններու մէջ զանուած և պարտականութիւնները ամենայն սիրով կատարած է . . .»

Ժամանակ իր 94 տ. թիւին մէջ խօսելով Նորիկեանի վրայ ի մէջ այլոց հետեւեալ տողերը կը գրէ : «Այսպիսի ժամանակի մէջ ասանկ գործ մը գլուխ հանելը պարզապէս մեծագործութիւն



համարելով, Ազգը որ սասանկ լեզուազէտ անձե-  
րու պէտք ունի, իրաւունք ունի յիշեալ մեծա-  
գործ Նշան ազգային մահուանը վրայ արամելու:

Նշան ազգ գրած է փոքրիկ տետրիկ մը «Տե-  
ղեկազիր Ազգ. Հիւանդանոցի նորոգութեան  
1864—65 տագր. Մէհէնտիսեան Պօլիս»:

Այն ատեններէն ի վեր հիւանդանոցը վերա-  
շինուած է բոլորովին, բայց պատմութիւնը չը  
հիննար ուզեցինք յիշել այս բարեգործ անձը  
մեր Յիշատակարանին մէջ՝ արժանի տեսնելով

զինքը զետեղել հոս, քանի որ իր ջանքերը և  
ազգեցութիւնները զուտ հանրային եղած են:  
Իր արժանաւոր գաւաին է Մկրտիչ Էֆ. Նորիկ-  
եան Գրադէտ և Պետական մարզը, նախկին  
հիւպատոս Ամերիկայի, և որ գրական յօդուած-  
ներ ալ ունի հրատարակած 1884—86ի Մասիս-  
ներու մէջ:

Ա.Գ.Ի.ԻՐՆԵՐ.— Տեղեկազիր Ազգ. հիւանդանոցի հոգա-  
բարձութեան 1864—65. Մասիս թիւ 754(21 յուլիս 1866)  
փնջիկ թիւ 3 (1866 յուլիս 21) ժամանակ թ. 94 (1866 յու-  
լիս 30) էջն. —



# ՄԻՔԱՅԷԼ ՄԻԱՆՍՍԻՐԵԱՆՑ

1829 -- 1880

Ռուսահայ գրողներու մէջ յայտնի դէմք  
մը եղած է Միքայէլ Միանասարեանց ծնած՝ 1829  
թուին:

Ինք մանկութեան հասակէն մինչև վերջին  
շունջը ազատ գաղափարներ ունեցաւ, մար-  
դասէր և ազգասէր շարունակ իր մտասեւե-  
ռումը եղած էր դժբաղդ Հայ ազգին տառապան-  
քը: Որչափ որ եկեղեցականներու պակասու-  
թիւնները կը քննադատէր այսու հանդերձ սա-  
կայն ջերմ եկեղեցասէր մըն էր: Անոր սիրած  
գաղափարներն էին ուղղութիւն, ազգասիրու-  
թիւն և բարեգործութիւն:

Միանասարեանցի գրական գործունէու-  
թիւնը որ ցրուած է նոյն ժամանակուայ Ռու-  
սահայ թերթերու մէջ կ'արտայայտէ աշխր-  
ջութիւն, գործնականութիւն և ազատամտու-  
թիւն, իր խորհրդածութիւնները որոնք մտած են  
իր ամէն հրատարակութիւններուն մէջ լեցուն են  
առողջ, հասուն և գործնական գաղափարնե-  
րով: Ազգային դաստիարակութեան մասին  
ծրագիր մը կազմած է իւր «Քնար Հայկականի»  
վերջարանին մէջ 1867 թուականին որ ինքնին  
խղճամիտ աշխատութիւն մըն էր: Բոլոր  
կեանքը և ինչքը նուիրած է ազգային դաս-  
տիարակութեան օգտին, անդադար կ'աշխատէր  
և իր աշխատութեան պտուղները եղած են բաց ի  
Ռուսերէն և Հայերէն յօդուածներէ 1. Քնար

Հայկական (1868) որ լաւագոյն հաւաքածուն է  
ազգային երգերու: 2. Կանոնաւոր և վայելուչ  
գրութեան պատմութիւնը և տեսութիւնը (1872):



236—ՄԻՔԱՅԷԼ ՄԻԱՆՍՍԻՐԵԱՆՑ

3. Օրինակները (1873) որուն մէջ զարմանալի  
համբերութեամբ մշակած է դարոցական ման-  
կավարժութիւնը՝ գրութեան տեսակէտով,

մանրամասնօրէն ուսումնասիրած է դասերը,  
պատմութիւնը և այլն, և վերջապէս իր գոր-  
ծերու պատկն է 4. Bibliographia Caucasica et  
transcaucasica (1876) որ Կովկասի և Անգրիկ-  
կասի մէջ եղած հսկայ գրականութեան ման-  
րամասն մէկ ցանկն է, ուր մասնաւորապէս  
հայկական մասը աւելի ճոխ է, ատով գիրքը

Եւրոպական նշանակութիւն ստացաւ: Մեղք  
որ իր այս երկասիրութեան առաջին հա-  
տորը միայն կրցաւ հրատարակել իսկ երկրորդ  
հատորը որուն ձեռագիրը պատրաստած էր, չէ  
հրատարակուած: Մեւտ է 1880 ապրիլ 5ին:

Աղբիւրներ. — Փարոս Հայաստանի 1880  
կց 79:



237—ՏՕՔ. ՆԻԿՈՂՈՍ ԷՍՄԷՐԵԱՆ

# ՏՕՔ. ՆԻԿՈՂՈՍ ԷՍՄԷՐԵԱՆ

1860 -- 1910

Տօք. Նիկողոս Էսմէրեան ծնած է Սկիւսա-  
րի մէջ 1860ին: Ինք համեստ ընտանիքի մը զա-  
ւակն էր որ շատ կանուխէն կորսնցնելով ծնողքը  
ինքնօգնութեամբ ու աննկուն աշխատու-  
թեամբ հեացնեալ յաւաճացած է: Իր նախնա-  
կան կրթութիւնը ստանալէ վերջ Բ. Դուան մէջ  
երկրորդական պաշտօնի մը կը մտնէ, բայց այդ  
պաշտօնական սեղմ կեանքը չկրնալով յազուրդ  
ապ իր մտքին թռիչքին, սազին անդին կ'իյ-

նայ տապարէզը փոխելու համար:  
Իր ընտանեկան բարեկամին Նշան Էֆ.  
Ղուկասեանի խորհրդով, որ Հայ բժիշկ-  
ներուն և քիմիաբաններու մեծագոյն մա-  
սին առաջնորդը եղած է, կը մտնէ Կոյս.  
Բժշկական վարժարանը, և յաջողութեամբ  
իր ընթացքը աւարտելէ վերջ, կը մեկնի Բարիդ:  
Հոն բախտը իր առջև կը հանէ մարդասէր և հա-  
մակրելի վարդեա մը, Տօքթ. Վէճէր, Բարիդի



ամենէն նշանաւոր ակնաբոյժը որուն հրամանին և թեւարկութեան ներքեւ ութը տարի անընդ-հատ կը կիրարկէ բժշկութեան ամենափափուկ ճիւղը, ակնարութեանը: Փրանսացի վարպետը այնչափ կը համակրի երիտասարդ Հայ-յուն, որ անոր անձին վրայ տեսնելով իր իսկական յաջորդը, արհեստին ու է գաղանիքը չի խնայեր անկէ և իր իսկ ներկայութեանը ամենակնճուտ գործողութիւններ կատարել կուտայ Էսմէրեանին:

Պոլիս վերադառնալը և հանրածօնօթ դառնալը գրեթէ 6 ամիս չտեսեց և արդէն Էսմէրեան օրուան մարդն էր բժշկական աշխատին մէջ: Իր յաջողութիւնները չսահմանափակուեցան միայն թուրքիոյ մէջ, որուն բոլոր կողմերէն յուսահատ հիւանդներ կուգային իրեն, այլ քանիցս մասնաւորապէս հեռագրով հրաւիրուեցաւ Եգիպտոս բարձրատիճան հիւանդներու համար:

Վարպետին և աշակերտին յարաբերութիւնները այնքան մտերմական էին որ Տօքթ. Էսմէրեան Պոլիս հաստատուելէ և նախանձելի դիրք մը գրաւելէ ետքն ալ ամէն տարի ամբարն եղանակին անպատճառ Բարիզ կ'երթար, որովհետեւ Տօքթ. Վէքէր օգտօթխութեան երթալուն առթիւ մի միայն Էսմէրեանին կրնար վստահիլ իր բոլոր հիւանդները սրնոյ մեծագոյն մասը ազնուապետական դժուարահաճ ընտանիքներէ կը կազմուէին:

Պոլիս հաստատուելէն վերջ ամուսնացաւ

Գառնիկ էֆ. Յակոբեանի աղջկան հետ որ Տօքթօրին արժանաւոր ընկերուէին եղաւ:

Տօքթ. Էսմէրեանի մասնագիտութիւնը դարազրուի մը բացաւ Պօլսոյ միջազգային բժշկութեան մէջ և հայերէն աւելի չուտ օտարներն էին որ փութացին օգտուիլ և հրապարակել Հայ հանճարը: Մեռաւ 3 դեկտ. 1910ին Գատը գիւղի մէջ և թաղուեցաւ տեղւոյն գերեզմանատունը:

Իր բարեսէր և ազնիւ ընտանոթիւնը սիրելի ըրած էին զինքը և աղքատները երախտագէտ էին իրեն, որովհետեւ անխտիր կը դարմանէր բոլոր հիւանդները և շատ անգամ անկարողներուն ալ նոյն իսկ դեղ կուտար ճրիարար:

Փամանակի 665 ի թուին մէջ Քասիմ գրելով «Տօքթ. Էսմէրեանի կտակը» անուն յօդուածը Տօքթ. ին ըսած հետեւեալ բառերը կը լռէ:

«Երբ Պոլիս հաստատուեցայ, բնու չթերացայ վարպետիս երկու պատուէրներուն, առաջին անգամ ուր որ հաստատուեցայ հոն մնացի: Իսկ աղքատներուն և ձրիներուն այնչափ լայն տեղ տուի դարմանատանս մէջ, որ այսօրուան արուեստս իրենց կը պարտի, որովհետեւ եթէ այս ձրիները չըլլային, ինչպէ՞ս պիտի կրնայի ճանչցնել ինքզինքս:»

Աղբիւրներ. — 1910 Սեպտեմբերի Պոլսական բոլոր քերթեր:

# ՅԱԿՈՒԲ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Ա Ձ Գ Ա Պ Ե Տ  
1833 -- 1906

Յակոբ Մատթէոսեան ծնած է 1833 Նոյեմբեր 13ին Կ. Պօլսոյ Լանկա թաղին մէջ: Հայրը արհեստով դերձակ՝ Կարինէն գաղթած էր ընտանեօք և հաստատուած Պոլիս:

Յակոբ Մատթէոսեանի մայրը ազատամիտ կին սը ըլլալով Հայ Բողոքականաց պաշտամանց կը յաճախէր որով իրեն որդին ալ կանուխէն հետեւեցաւ բողոքական եկեղեցւոյն: Իր նախնական կրթութիւնը ստանալով Մայր-Վարժարանին մէջ ապա աշակերտած է Տր.

Համլինի Պէպէքի վարժարանը ուր իր նախակրթութիւնը ստանալէ վերջ հազիւ 15 տարեկան՝ Ամերիկա ճամբորդած է կազմարարութիւն սովորելու նպատակաւ: Նիւ-Եօրքի մէջ այդ արհեստին 4 տարի աշակերտելէ վերջ Պօլիս դարձած և Վէզիր Խանի մէջ հաստատուած է իբրև արուեստագէտ կազմարար:

Թէև մեծ դրամազրուի մը չունէր, բայց ունէր գործի մարդու տաղանդ և լաւ կերպով սովորած ըլլալով իր արհեստը, յաջողութիւն

զանեղու դժնդակ պայքարները չունեցաւ, սկիզբէն իսկ յաջող հանդիսացաւ և մինչև վերջը պահեց այդ արուեստին մէջ առաջնակարգ դիրք:

1868ին Ազգապետ ընտրուեցաւ 35 տարեկան հասակին մէջ և 1870ին Սուլթանին արտօնութեամբ պտոյտ մը ըրաւ Փոքր Ասիոյ և Սուրիոյ մէջ, այցելելով բողոքական եկեղեցիներու մեծագոյն մասը: Այս կարեւոր պաշտօնը 20 տարի արժանաւորաբար վարելէ վերջ 1889ին հրաժարեցաւ և իր նախկին արհեստին կցելով միանգամայն ապագրատուէն յաջողեցաւ առաջնակարգ հաստատութեան մը վերածել՝ գործակցութեամբ իր որդւոյն Տ. Վահան Մատթէոսեանի: Այսպէս հայր և որդի մեծ մղում տուած են մանաւանդ ապագրական արհեստին որու կատարելագործութեան աշխատած և յաջողած ալ են Պօլսոյ մէջ առաջնակարգ հաստատութիւնը հիմնելու:

Յակոբ Մատթէոսեան Հայ Բողոքականութեան պատիւ բերող անձնաւորութիւն մը եղած է իր անստղծ վարքով ու բարքով, և միանգամայն տիպար գործի մարդ և սիրտար ամուսին:

Իբր ուսումնասիրող քրիստոնեայ մը յաճախ տեսնուած են իր օգտաշատ յօդուածները հանդէսներու մէջ և գրած է «Խորհուրդք Հաւատացելոց» անուն գեղեցիկ գիրքը իր աղջկան, Օր. Անդրանիկի մահուան ցաւին ազդեցութեան տակ՝ իր վշտին սիրտանք մը գանեղու համար:

Մեծ եռանդ ցոյց կուտար նաև կրօնական գործերու մէջ: Երկար տանն վերաստուէ եղած է Կիրակնօրեայ դպրոցին՝ բաղմաթիւ պատանեաց և երիտասարդաց վարքին և կեանքին բարձրագոյն նպատակ մը ներշնչելով: Աշխատութիւն ու ջանք չէ խնայած ապել տալու համար Պորտի Աստուածաշունչի ընկերութեան Գրաբար Աստուածաշունչը՝ դիւրամտաչելի ընելով զայն հայ ժողովրդեան ամէն դասակարգին, վերջապէս չնորհիւ իր յամուտ աշխատութեան կրցաւ գործը զլուիս հանել: Մեծ անձկութիւն

ներ կրած է Բերայի Աւետարանական Եկեղեցւոյ շինութեան և Հայերէն Նոր Երգարանին հրատարակութեան համար: Երկուքն ալ իր սիրելի աշխատութիւններն եղած էին իր նախաձեռնութեամբ սկսուած ըլլալուն համար և կը փափաքէր բոլոր սրնով անոնց աւարտումը տեսնել իր մահէն առաջ: Սակայն վեր-



238—ՅԱԿՈՒԲ ԷՖ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ջերը մահէն քանի մը ամիս առաջ կ'ըսէր «Նախազգացում մը ունիմ թէ պիտի չապրիմ մինչև ասոնց աւարտուիլ» Իր կեանքը բարիքի և օգտակարին յատկացնելէ վերջ հանգչեցաւ 1906 մայիս 22ին 72 տարեկան հասակին մէջ, իր մեծահամբաւ ապարանը թողլով իր զաւակին Տ. Վահան Մատթէոսեանի:

Աղբիւրներ. — Համազգային օրացոյց 1908. Բիւզանդիոն, Արեւելք եւլն. 1906:





# ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ

1867--1891

Գաւառը իր բանաստեղծներու շարքին մէջ կը պանծայ Պէշկէօթիւրեանով, ան գաւառին Գուրեանն՝ իսկ Հայուն Միլլուան եղած է որ Տերեւարափին չափ մեղամաղձոտ իր Սրինգ քերթուածովը կարողացած է գրաւել առաջնակարգ դիրք մը՝ հայ գրական գէմքերու շարքին մէջ:

Ծնած է 1867ին Խարբերդի մէջ բողոքական ծնողքէ, դեռ մանուկ տարիքին մէջ կորսնցուցած է ծնողքը և ծեր հաւուն քով անցուցած է իր որբութեան առաջին տարիները:

1873ին, հաղիւ վեց տարեկան կ'ըսկսի յաճախել տեղւոյն ամերիկեան միսիոնարաց վարժարանը ուր կը լրացնէ իր ուսումը տարիներու շրջանին մէջ՝ մեծ յաջողութեամբ ու սանկլով ըսցի ի մայրենի լեզուէն նաև անգլիերէն լեզուն և այդ լեզուով իսկ լսփելով Անգլ. գրականութեան գլուխ գործողները, Համլէթը, Մաքսիմը, ինչպէս նաև Օսքարի և Չայլա Հարօլտի հեղինակութիւնները:

Ընթացաւարտ լլալէն յետոյ չէ բաժնուած իր սիրական վարժարանէն ու իրր ուսուցիչ մէկ քանի տարիներ պաշտօնավարած է ունենալով ձեռնաստուեն աշակերտներ:

Իր ընտանեկան պայմանները ու գաւառի կեանքը մղած են զինքը բանաստեղծութեան ու գրած է Սրինգը, Վիստրիքը և այլ քերթուածներ: Նաև 14 տարուան աշխատութեամբ մը կատարելագործած է արուեստագէտի մը աստիճան իր երգէտն ու սրինգ զարնելու կարողութիւնը:

1891ի յունիսին դեռ երիտասարդ, թուրքախոս անողոք ճիրաններէն չկրնար խուսափիլ ու իր ցաւոտ կեանքը կը վերջացնէ Խարբերդի գերեզմանատան մէկ անկիւնը:

Ռուբէն Որբերեան գեղեցկապէս ի վեր հանած է հէք բանաստեղծին կեանքը հետեւեալ սողերով:

«Անտես, խամբելու սահմանուած ծաղիկ մըն էր Գարեգին Պէշկէօթիւրեան, որ իր ետեւէն արցունքի հետ խառնուած տխուր հետք

մը թողած է, լացի երկար յիշատակ մը՝ որբութեան գրկէն մինչև գերեզմանին ծոցը: Տառապեալ հոգի մը որ Բաղեղին պէս հողէն ծնաւ, — քանզի Գարեգին դեռ նոր կը սկսէր ճանչնալ իրերն ու մարդիկը՝ և ծնողքին տեղ հողը ցուցուցին իրեն —, ծլեցաւ ու մեծցաւ և նորէն հող դարձաւ: Անձրեւը կը ջնջէ տարա-



239—ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ

բախտ բանաստեղծին գերեզմանը, որուն վրայ յիշատակի քար մը իսկ չկայ: Եւ ինք արդէն անձանճթ, մոռցուած . . . :

Հիմա որ այս սողերը կը գրեմ, մտքիս մէջ զարթնումի նման բան մը տեղի կ'ունենայ որ զիս անցեալի ստուերներուն մէջ պտտցնելով, ինձի կը մասնանջէ դժբաղդ երիտասարդը՝ դուռը խարտեալ մազերով, կարմրուկ մօրուքով և երազուն ակնարկով՝ որ կը պտտի իր ծնողքին գերեզմանին շուրջը, կամ կը ծռի երգէտին վրայ, լսու կամ երգելու համար:

1867ին առաջին անգամ լոյս կը տեսնէ Գարեգին բողոքական ծնողքէ: Սակայն շատ չանցնիր, անողոք հիւանդութիւնը իր մանուկ, մատղաջ թեւերուն մէջ կը տանի ծնողքը, հողը կը տանի զանոնք, ու խեղճ մանուկը կը ստիպ-

ուի իր ծեր հաւուն քով կենալ: Կը մեծնայ միայնասէր ու տխուր, և իր այդ զգացումները ճարակ կը գտնեն այն անձայն, ամայի և ապառաժուտ կողերուն վրայ՝ որոնք Խարբերդի հիւսիսային կողմը դէպ ի վեր կ'երկարին, ամպերու մէջ ցից գագաթներ սահեցնելով:

Վեց տարեկան հասակին կը սկսի դպրոց յաճախել, և իր կրթութիւնը ամերիկեան միսիոնարաց դպրոցին մէջ կ'առնէ: Իր ուսուցիչներուն վկայութեան համեմատ, Գարեգին՝ դպրոցի դասերը փայլուն յաջողութեամբ կը պատրաստէր: Հաւասարապէս կ'ունէր մաթեմաթիքական չոր դիտութիւնները: Շատ ալ կը սիրէր Անգլիերէն լեզուն, որ իր սուր ու եւանդուն երեւակայութեանը առջև կը պարզէր Համլէթի, Մաքսիմի, Օսքարի և Չայլա Հարօլտի նման գրական ու բանաստեղծական անըման դճարներ, զորս ամէն տարբեր հիացումով դիտած են: Ստոյգ չեմ գիտեր թէ ո՞ր թուականէն սկսաւ, այլ սաչափ կը յիշեմ թէ Պէշկէօթիւրեան տասնութ տարի անընդհատ երգէտն զարնելու աշխատեցաւ, և ճշմարիտ արուեստագէտի հրաշքերը խանդովն ու անսահման եռանդով հետապնդեց իր արուեստագէտի խախը, որուն համար «չառ հեռու է ինձմէ» կը մրմնջէր:

Հոս է որ կ'երկծիւզի արուեստագէտը, և երկու տարբեր հոգիներ ի յայտ կուգան մէկ անձի մէջ, զաշնակահարը և բանաստեղծը, քնարն ու երգը: Սակայն այդ երկուքը կը միացնէր իր անձին վրայ ա՛յնքան սուրբ յոյզերով և այնքան խորհրդաւոր կապերով, որոնց գաղտնիքին՝ ճշմարիտ արուեստագէտը միայն կրնայ թափանցել: Ամէն տեղ, ամէն պարագայի մէջ, քնար էր ու երգ, երգ էր ու հաւաչ: Իր ճարտար ու դիւրաշարժ մասները հմայքով մը, դիւրութեամբ մը մերթ երգէտը գեղջուկ հովուուհիի մը կը փոխարկէին՝ որ աբեւելեան ամէնէն սրտածմբիկ շեշտերով իր սիրականին մաշը կը վայէր, և մերթ խորունկ փողի մը որ քայլերգ մը կը հնչէր: Իր երաժշտական տաղանդը բազմիցս գնահատուած է, և շատերէ:

Քնարերգակ բանաստեղծ մըն էր Պէշկէօթիւրեան, ա՛յն բանաստեղծներէն զորս գաւառի վճիտ երկինքը միայն կրնայ արտադրել: Կը գրէր շարունակ և կը քաջալերէր ուրիշներն ալ որ գրեն:

Իր ճշմարտապէս բանաստեղծական կեանքը որ ծնողքին գերեզմանին քով կ'աճէր և երգէտին կ'երկրպագէր, իրեն շատ ներշնչումներ կուտար գրելու, արտադրելու: Կը յառէր շարունակ այն բանաստեղծական տեսարանին որ Խարբերդի առջև կը պարզուի, կը սեւեւէր այն բանաստեղծական կապոյտին որ քաղքին վերելը կը տարածուի, և իր մեղամաղձիկ հողին կը յուզուէր ու կ'արատասուէր այն գերեզմանին վրայ ուր իր ծնողքը թաղուած էին: 1889ի վերջերը թոքախտով կը բռնուի հէք երիտասարդը, — ծնողքին իրեն թողած միակ ժառանգութիւնը: Կը սեանէի որ կը հիւծէր հեազնեաէ, արիւն կը թքնէր: Օր մը՝ «ա՛լ բարեկամներս կը խորշին իւմէ», բտաւ ստակալի մեղմութեամբ մը: Քանի մը որ վերջը չը կրցաւ զայ դպրոց՝ որ չորս տարիէ ի վեր կը դասախօսէր:



240—ՊԵՇԿԵՕԹԻՒՐԵԱՆ ԳԱՅԱՂԻՆ ՄԷՋ

Անկողնին մէջ արտադրեց իր վերջին գործը «Սրինգ»ը . . .

Ե՛կ, իմ սրիճգ, իմ բարեկամ ursագին,  
Նիհար Երբքներդ, ո՛հ, երեւուն,  
Դի՛ր դալկահար իմ Երբքերուն,  
Երգե՛նք ու լանք, լա՛նք ու երգե՛նք sprisագին:  
Լա՛ց, զի լոկ քեզ գրքի հատրն իմ ursին.  
Գու բարունակ էիր կանաչ,  
Երբ մի անգուր ձեռք անճանաչ  
Կսեց ըզեզ, անջատեց մայրն ու ողին  
Եւ քոյլ սըլիւր որ լանցիդ վրայ գալարուս



Ծակեր բացին, վեր երկաթի  
 Թ՛ղ այդ վերեհն, բար, կարի  
 Արևն, բողո՛ միակ ըստիս վիճերուդ :  
 Ես այ մանուկ էի անմեղ երբ վաղուց  
 Մի անձանօք պատճառ վրդիս  
 Լուծ մը դրաւ, ո՛րք կոչեց զիս  
 Եւ հօր ու մօր սիրոյն կառօս զիս բողուց,  
 Իմ ալ կուրծքս ծակծկեցին ժանս վերեհ  
 Եւ որպէս զուն սրեւս որմին  
 Յենուլ, լրուլ, մինչեւ որ մին  
 Զըյուզե քեզ չե՛ս հառաչեք, չես երգեք,  
 Լրուիկ մնջիկ սրեմ եւ ես հեռու կալ  
 Ընկերութեան ժիճ ժրխորեհ,  
 Եւ իմ սրտին, հոգւոյն խորեհ  
 Զննել, բզգալ, լոկ զարմանալ ու խոկալ :  
 Թող երգեհոն դաւենակ, քնար գեղգեղեն  
 Յեկեղեցո՛ւ, ի գինեւան,  
 Աղօթ ու պար բոչին, խայսան՝  
 Թող այլ վայ՛են հանոյ մարմնոյ հոգեղեն .  
 Ա՛խ, իմ սրտինգ, աւխարհ յոյսով բո՛ղ բերկի,  
 Թող բախսն անօր ժպտի յոյսին,  
 Ե՛կ ես եւ դու ի միասին  
 Լանկ ու երգենեմ, մեր բաժինն այս է յերկիր . . .  
 Եւ անկողնին մէջ պառկած՝ Գարեգին կը  
 սեանէր որ սրտին յոյսերը մտ թին մէջ կ՛ան-  
 ճատանան մէկիկ մէկիկ, ու կը սպասէր մա՛ն-  
 ուան որ արդէն սկսած էր զինքը լափել : Եր-

գէտնր իր քովը բերել տուած էր : Վերջին ան-  
 գամ ժամուկէսի չափ այս սողերը գրողը  
 օգնեց, և Գարեգին զարկաւ երգէտնր՝ մէկուն  
 պէս որ ա՛լ պիտի բաժնուի իր սիրականէն :  
 Վերջին շնչաբեր որոնք Գարեգինի մէկ հառա-  
 չին հետ սահեցան, միշտ կը կրկնուին սրտիս  
 մէջ՝ որ այդ մեղամաղձիկ հոգին յիշեմ :

Մահուընէն ութ օր առաջ իրեն գացի մնաս  
 բարով ըսելու, և չկրցայ զինքը ճանչնալ :  
 Սաուեր մը որ կը քաշիւտուէր սակաւին :  
 Բոցայտ և բոցեղէն Գարեգինէն ա՛յդ միայն  
 մնացած էր : Հագիւ կրցաւ «երթաս բարով» մը  
 հծծել, ու գացի արաս՛ւմ, տխուր : Ա՛լ չսեսայ  
 զինքը :

Երկամետայ արձակուրդէն վերջը դարձայ  
 կտրուրդ, և գտայ Գարեգինը՝ որ միտաւորիկ  
 կը հանգչէր սպառաժուա լերան կողին վրայ :  
 Ափ մը հող՝ հողակոյտի մը սակ, սրուն վրա-  
 յին այնքան սիրուէտ, այնքան կենտունակ  
 յոյսեր ու հրապներ անսահմանութեան կըն  
 գացին :

Լերան չուշան մը՝ որ կը խամրի և մայր  
 հողին կը խամուի :»

ԱՂՅԻԻՒՆԵՐ. — Մասիս 1892 էջ 199. —  
 Ծաղիկ Ա. Անտոնեան 1907 էջ 391. — Թան-  
 գարան Բարձ. Հ. Առասուր էջ 333:



# ԳՐԻԳՈՐ ԶԵԼԷՊԻ ՏԻԻԶԵԱՆ

1774-1819

Յովհաննէս Զելէպի Տիւղեանի երկրորդ  
 գաւակը՝ Գրիգոր Զելէպի ծնած է 1774ին,  
 38 տարեկան էր երբ իր հօր մահուամբ իբր  
 երիցազոյն մանչ գաւակ նոյն պաշտօնին յա-  
 ջորդեց 1812ին՝ արքունի ոսկերչագետ անուան-  
 ուելով : Ինք արդէն իր հօր ողջութեան փողե-  
 բանոցին մէջ պաշտօնեաց ըլլալով բաւական  
 հմտացած էր ոսկերչութեան և գծագրութեան  
 ու միանգամայն ինքնաշխատութեամբ ուսած  
 էր Արարերէն և Պարսկերէն լեզուները, նաև  
 վարժ գեղագիր էր Թուրքերէն լեզուի :

Գրիգոր Զելէպի սղայ հասակէն իսկ արհես-  
 տին վարժուած ըլլալուն մեծ ճարտարութիւն կը  
 ցուցնէր ամենէն գծուարին գործերուն մէջ :

Սուլթան Սէլիմի աւագանին կը սիրէր  
 զինքը և ծանր խնդիրներու մէջ իրեն խոր-  
 հուրդին կը զիմէին :

Սուլթան Մահմուտ եւս չարունակեց իր  
 նախորդին ունեցած համակրութիւնը Սարգիս  
 և Գրիգոր Զելէպիներու վրայ :

Գրիգոր Զելէպի 1817 Յունվար 27ին  
 ամուսնացած է Օր. Բաթէնկոյ Հէյպէթէրեանի  
 հետ :

Երկու եղբայրներ ձեռք ձեռքի տուած իրենց  
 յանձնուած բարձր պաշտօնը արժանաւորաբար  
 կը վարէին : Նոյն ժամանակները Եէնի-գեղ  
 ծովեզերեայ ամարանոց-պալատ մը կը շինէին եր-  
 կու եղբայր, ծախքին մէկ մասը իբրև 30000 դրշ.  
 ինչ որ նոյն ժամանակին համար մեծ գումար մըն  
 էր, նուէր ստացան իրենց խնամապօլթ պաշա-  
 պան Սուլթան Մահմուտ Բ.էն : Թշնամիներ՝ ու-  
 բոնք միշտ նորանոր սափթներ կ'որոնէին, այս  
 շինութիւնը միջոց համարելով սկսան քառութեան :

Այս ստորնութեանց պատճառը Տիւղ-



241—ՏԻԻԻՆ ԳՐԻԳՈՐ ԶԵԼԷՊԻ ՏԻԻԶ

կանց՝ թագաւորին շատ սիրելի ըլլալն էր :  
 Անոնք միշտ ազատ ելեւմուտք ունէին պալա-  
 տան մէջ և քանի մը տուրքերէ բոլորովին  
 ազատ էին :

Բայց Սուլթանը որ միշտ համոզուած էր  
 թէ Տիւղեանց ազգատոճմը ծանօթ է իր  
 հաւատարմութեամբ, փափաքելով թշնամի-  
 ներու չարութիւնը ի դերև հանել հրաման  
 կուտայ որ քննութիւն բացուի և Իպրահիմ  
 Սարիմ էֆէնտի քննիչ կը կարգուի : Տիւղեանց  
 թշնամիներուն պարագլուխներէն էր Շապճի

Հրեան որ իր ընչաքաղցութիւնը յագեցնելու  
 միակ միջոց կը կարծէր փողերանոցի պաշ-  
 տօնը ձեռք անցնելը :

Երբ քննութիւնը վերջացաւ Տիւղեանք ան-  
 պարա նկատուեցան . Սուլթանը ի վարձ  
 անոնց բարւոք ծառայութեան խիլայեց զի-  
 բնքը, սամոյրներ հազոցուց, ինչ որ թագաւորին  
 հաճութիւնը վայելելու ամենամեծ նշաններէն  
 էր, և որ մի միայն Ուլահ—Պուղտանի պէ-  
 յերը կրնային կրել : Այս յազթանակը աւել-  
 ցուց անոնց զօրութիւնը և վարկը բարձրացուց  
 Սուլթանին առաջ : Նոյն ատեն առաջնակարգ  
 դիրք մը կ'ըսկսէր գրաւել նաև Հալէթ էֆ. որ  
 առաջուց ծանօթ էր Գրիգոր Զելէպիի և ուր-  
 կից շատ բարիք տեսած էր երբ սակաւին Հա-  
 լէթ աղքատ վիճակի մէջ էր :

Երբ Տիւղեանք հասկցան Շապճի հրեային և  
 Հալէթի իրենց նկատմամբ բարեացակամ չըլ-  
 լալին, աչքէ ձգեցին Հալէթը, որու վրայ  
 այս վերջինը սկսաւ թշնամանալ և սափթ կը  
 փնտռէր որ ամբաստանէ Տիւղեանները : Հա-  
 լէթ սրտով նաև հաշակաւոր Սիլահասար Ալի  
 ազան, անոր միջոցաւ Սուլթանին ամբաս-  
 տանեցին թէ Տիւղեանք արքունի գանձը կու-  
 ղտպակով Եւրոպա պիտի գաղթեն և թէ ա-  
 նոնք մեկնելուն ետք՝ ալ անկարելի է զիրենք  
 բանտարկել և այլն :

Սուլթան Մահմուտ թէև նախ չը հաւա-  
 ստց, բայց զինքը այնքան ծանծրացուցին, այն-  
 չափ աշխատութիւն թափեցին աչքէ ձգելու  
 համար հէք Տիւղեանները, որ վերջապէս տեղի  
 տուաւ և հաւատաց :

Տիւղեանները զգացին թէ դարան մը  
 կը լարուի իրենց շուրջ, բայց քաջալերուելով  
 նախընթաց փորձերէն որոնք սպարդիւն կոչած  
 էին, սպանով էին թէ այս փորձն ալ ի դերև  
 պիտի ելնէր : Բայց խոհեմ և զգոյշ չը կրցան  
 գանուել, իրաւ է որ այդչափ բարձր պաշ-  
 տօններ վարող ընտանիք մը կրնար իր վիճա-  
 կին համեմատ փառաւոր կերպիւ ապրիլ, բայց  
 գոնէ այդ միջոցին որ իրենց դէմ թշնամիներ  
 չարութիւններ կը մտածէին, պէտք էր որ աչա-  
 լուրջ ըլլային, նկատի առնելով ժամանակին  
 փափկութիւնը :

Հոս է որ տարակարծիք պիտի գանուինք  
 մեր նախորդ կենսագիրներէն :

Ընդհանրապէս վիէննական և վենետիկան  
 հրատարակութիւններ այս գաւազրութեան



մասնակից ցոյց կուտան նաև Գաղէզ Արթին ամիրան :

Մենք մանրագնին քննութիւններ ըրինք և որոշ փաստ մը չը կարողացանք գտնել, ընդհակառակը գտանք Պէղճեան ամիրայի գրած երկու նամակները, մէկը Տիւզեան Գրիգոր Չէլէպիի ուղղուած, նախ քան զլիստառու մը հէք Տիւզեաններու՝ իսկ միւսը Ս. Կարապետ վանքը ուղղուած Յակոբ Չէլէպիի Գաղէզի աքսորէն վերադարձէն ետք :

Առաջինը աղբային ինդրոց նկատմամբ գրուած նամակ մըն է, որոնց մէջ Գրիգոր Չէլէպի եւս մասնակցութիւն ունեցած է և Գաղէզ Չէլէպիին կարգ մը խնդրանքներ կ'ընէ, այդ նամակին մէջ խորունկ յարգանք մը կը տեսնենք զէպի Տիւզեանները :

Իսկ երկրորդ նամակով Գաղէզ Յակոբ Չէլէպիի հետ միասին նուէրներ և սրած կը զրկեն Ս. Կարապետ վանքին և շուտ մէջ բարեկամական ազդեր կան Չէլէպի մասին :

Արդ, կը հարցնենք թէ՛ Գաղէզի պէս բարեխրատ անձնուորութիւն մը կարելի՞ բան է որ մեզոսկից լլայ չալէթ լսուած սրիկայի մը գրգորատ լեանց, քանի որ Գաղէզ-Տիւզեան անունները այդչափ սերտիւ կապուած են իրարու՝ զլիստառուէն թէ՛ առաջ և թէ՛ վերջը : Չէ, չենք հաւատար տասր և կը կարծենք թէ այս երկու նամակները, որոնց նմանահունութիւնները կը գետեղենք հոս, բաւական պիտի ըլլան ապացուցանելու թէ Գաղէզ ո ե է մասնակցութիւն չէ ունեցած այդ դաւաճանութեան մէջ :

Յետոյ արդէն ինդրը Տիւզեանց անձէն աւելի փողերանոցի պաշտօնէութեան ինդրի մը վերածուած կը գտնենք երբ կը կարգանք Չարհանէ Ամիրի Ապտիւլ Բահման պէկին և Գրիգոր Չէլէպիի մահալճիւնները որոնց որին նակը կրցանք գտնել Անտօնեան վանքէն :

Աչքէ անցուցինք նաև յունական աղբիւրներ որոնք այդ մահասարուս պատմութիւնը կ'ընեն բացարձակապէս յայտնելով չալէթի դրդուածով ըլլալը, և արդէն այդ սրիկային սոյն եղբրական գործին մէջ դեր ունենալուն ապացոյց չէ՞ ի վերջոյ անոր ալ զլիստառուէրը Սուլթանը կ'իմանայ թէ Տիւզեանք անպարտ էին :

Եթէ Գաղէզ դեր մը ունեցած ըլլար, չէ՞ մի որ ան ալ պիտի զլիստառուէր :

Բայց անցինք մեր կենսագրութեան ամէնէն սարսուռ գրուածին :

\*\*\*

«Չալէթ Բարձրագոյն Դրան դեսպան էր Փարիզի մէջ երբ Յակոբ Չէլէպի հոն գացած էր ուսմունք և մանրանկարչութիւն սորվելու, Չալէթ Տիւզեան Չէլէպիներէն մեծամեծ գումարներ փոխ առած էր : Յետոյ սակայն Պօլիս դաւանալէ վերջ ընու հոգ չէր տաներ պարտքը վճարելու և արտաքին մտերմութեամբ և խաբէութեամբ անոնց կորուստը դարանելով կ'ուզէր պարտքերէն ազատիլ : Չալէթ այս հարբանքուն մէջ էր երբ Տիւզեանց ձեռքին ներքե գտնուող անձ մը, որուն անունը լաւ կ'ըլլար թէ խոյս մտացուէր թէ՛ յիշատակաց և թէ՛ պատմութեան մէջ, մախալով Տիւզեանց և մտանաւորապէս Մկրտիչ Չէլէպիին իրենց հօրեղբորոցոյն գէմ, զնոց առ Չալէթ էֆէնտին և իմացուց իրեն թէ Տիւզեանք փոքրահոյցն յանձնուած գրամաղլիէն ստակ առած են և Չալէթ ալ լուր տուաւ Սուլթան Մահմադի որ Տիւզեանք փոքրահոյցն գտնար վտանգած են : Փութով հրամայուեցաւ որ հաշիւ տեսնուի և որովհետև փողերանոցին զլիստառը Ապտիւլ Բահման էֆէնտին էր, որ Տիւզեանց մեծ բարեկամ էր, անոր համար Չալէթ նախ դաջն փոխել տուաւ և Տիւզեանց թշնամի զլիստառ մը գրաւ » (Պատմ. Նորիխան տ. մաս էջ 303—304) Ընթերցողները կուսնցին թէ ակնարկուած անձը Գաղէզն է, արդ կը հարցնենք Գաղէզ ինչո՞ւ Չալէթին դիմէր քանի որ իրենց գրածէն կը հակնանք թէ փողերանոցին բացին բռն պահառը ինքը Չարհան էր : Չալէթ շարունակ գրամ քաշեր է Տիւզեաններէն, և վարպետութեամբ գտնանք մասնակցով ընակահարար ինք պիտի ազատէր և Տիւզեանք պիտի գառապարտուէին :

Գաղէզը ի՞նչ այպանելի դեր կրնայ ունենալ այս պարագային :

Յետոյ կ'ուզենք ճշդել պատմական սխալ մը, փողերանոցի զլիստառը Ապտիւլ Բահման պէկ եւս զլիստառուած է Տիւզեանց հետ, որոնց մահալճիւր անաւասիկ :





Չմուսնացած

Քանակ չունի

2 11 1912

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն



ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՁԵՌԱԳՐԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵԻՆ, ԵԻՆ,

## 1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԻՅՈՎ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Կ Ա Չ Մ Ե Ց  
Վ. Գ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ԱՁԱՏ ՄԱՏԵՆԱՇՄԱՐ ԹԻՒ 20

- 104. Անտոն Ծավեր Փառա Թրեկլոր (Շար.) 1 Պատկեր
- 105. Գրիգոր Ջիլիկիհեան 2 »
- 106. Գեորգ Ապուլլան 5 »
- 107. Եղիա Տեփեսեան 5 »



ՌԱՅԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ  
(Բանաւ Բարիպա)

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ  
Պ Ր Ա Կ Ի Ք. ) 22

1911

Լ. ՊՈԼԻՒՍ

ՏՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
Պատր Ալի Սեփերճիկեր փողոց թիւ 27

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
Վ. ԵՆ Պ. ՋԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ  
Կ. ՊՈԼԻՍ



«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ» կը հրատարակուի պրակ սա պրակ ամիսը անգամ մը, ամբողջութիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ՝ 4 հատորի մէջ ամիսօրուած և պիտի պարունակէ երևելի ազգայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուածները, կաթողիկոսներու և պատրիարքներու կենդանիները և այլն:

Կը շարունակուի Բ. Գ. Գ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 դրուչի:

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց քով ունեցած սօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք անոյժար իրենց կը վերադարձնենք դարձեալ:

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ 108 դրչ. ամէն տեղի համար, իւրաքանչիւր հատորի համար 30 դրուչ:

Բաժանորդներու անունները կը հրատարակինք հետզհետէ:

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարուայ սկիզբները և բաժանորդները պիտի ստանան իրր նուէր զեղարուեստական շքեղ կողքեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստուելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ Տպագրութեան 400 ամեայ Յորելեանին:

Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի գնահատէ այս գործը որ բազմաժառ եղած է և որուն համար սարիներով տքնած և տառապած ենք:

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 դրուչի Պոլիս Ջարդարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Ալէքսանդրիա Յ. Ղալիկեանի և Գաֆիէ Սուրէն Ջաքմաքճեանի քով:

Մեկ պրակի գինը 2 դրուչ. գաւառներու համար 100 փառա  
Իլսեկ Ջարդարեան Գրատուն, Պոլիս, Չախազնիպար, 24 — 26:  
Կը ծախուի ամեն տեղ:

### Մ Ե Ր Վ Ճ Ա Ր Ո Ղ Բ Ա Ք Ա Ն Ո Ր Դ Ն Ե Ր Ը

				Դրչ.
105.	Միջրան Խան Գալփաեան	Ալէքսանդրիա	4 հատոր	7692
106.	Բրոֆ. Գալպեան	»	4»	108
107.	Արմենակ Գարրիէլեան	»	Բ. »	30
108.	Մկրտիչ Նորիկեան	»	4 »	108
109.	Յ. Փափազեան	»	Բ. »	30
110.	Արմաւիր Մուրադեան	»	Ա. »	30
111.	Տիկին Բարթող փաշա	»	4 »	108
112.	Յովհաննէս Աղամբաեան	Գանձիրէ	4 »	108
113.	Ժ. Սիմոն	»	4 »	108
				8430



ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0510492

ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0364248



III  
1648

III  
1649